

## ԱՂՕԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓՍՅ

Մեր վիշտերուն մէջ, քեզի կը դիմենք, ով սուրբ Յովսէփ եւ քու Հարսիդ օգնութիւնը հայցելէ ետքը, վստահութեամբ կը խնդրենք նաեւ քու պաշտպանութիւնդ:

Այն սիրոյն համար, որ քեզ միացուց անարատ Կոյսին՝ աստուածամօր հետ, եւ այն հայրենի սիրոյն, զոր տաճեցիր Յիսուս Մանուկին, կը խնդրենք քեզմէ որ բարեհայեաց աչքով նայիս Յիսուս Քրիստոսի արեան գնով ստացուած ժառանգութեան վրայ եւ քու օգնութեամբդ ու իշխանութեամբդ մեր կարօտութիւնները հոգաս:

Ո՛վ աստուածաին ընտանիքի նախատես պահապան, պահպանէ Յիսուսի Քրիստոսի Ընտրեալ սերունդը: Հեռու պահէ մեզմէ, ո՛վ ամենասիրելի երկնաւոր Հայր, մոլորութեան ժանտախը: Օգնէ՛ մեզի երկինքէն, ով ամենազօր ազատարար եւ բարեխօս հայր Յովսէփ, խաւարային իշխանութեան դէմ մեր մղած պայքարներուն մէջ. եւ ինչպէս որ երբեմն Մանուկ Յիսուսի կեանքը մօտալուտ մահէն ազատեցիր, այսպէս ալ հիմա Աստուծոյ սուրբ եկեղեցին իր թշնամիներուն դէմ պաշտպանէ:

Քու հովանաւորութեամբդ պահպանէ մեզ ամէնքս, որպէսզի քու օրինակիդ նման եւ քու օգնութեամբդ զօրացած՝ կարենանք սրբութեամբ ապրիլ, բարեպաշտութեամբ մեռնիլ եւ յաւիտենական երանութիւնը ստանալ երկինքի մէջ: Ամէն: